

19035

371-3
U-44

2010

2001

ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

371.3

Ա-44-նե

ԳԻՏԱԿՑՈՐԱՐ ԿԱՐԳԱՑՆԵԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վեց օրինակելի դաս

ՃՆՈՂԱՑ ԵՒ ՎԱՐԺԱՊԵՏԱՑ ՀԱՄԱՐ

Յօրինելու Դ. Աղայեանց

Թիֆլիք

Տպարան Մովսիսի Վարդաճեան

1885

ՑԱՌԱՋԱԲԱՆ

Ով որ կարդացնելը սովորեցնում է գրել տպով—որ միակ ուղիղ ճանապարհն է—նա անշուշտ նկատած կը լինի, որ մանուկներն այդ եղանակով շատ շուտ և հեշտութեամբ են սովորում գրելը. որ այդ գործողութիւնը կատարվում է գիտակցաբար, առանց սուստ ու սխալ վերցնելու։ Բայց ինչք մեջ է դրա յաջողութեան գաղտնիքը. ինչ է պատճառը, որ մանուկներն այդպէս շուտով սկսում են գրել վարժապետի բելադրած կամ իրանց ուզած բառերն ու նախադասութիւնները։—Միակ պատճառն այն է, որ սանիկները—բերանացի նախապատրաստութեան շնորհիւ—կարողանում են գրելու առաջարկուած բառերն ու նախադասութիւնները լուծել—նախադասութիւնը՝ բառերի, բառերը՝ լանկերի, խսկանկերը՝ հնջիւների։ Բայց արդեօք ինչքան հեշտութեամբ եւ գիտակցաբար որ գըրում են, նոյնքան հեշտութեամբ ու գիտակցաբար էլ կարդանմ են։ Ոչ։ Պատճառն այն է, որ գրելիս՝ ծանոթ բառեր են գրում, գիտեն նախապէս նրանց լանկելը եւ հնջիւնների վերածելը, խսկանկանիս՝ նրանց ազդին միայն մի կարգ ծանօթ հնջիւններ են երեսում անծանօթ բառերի։ Գրելիս նրանք իրանց գիտցածն են գրում, խսկանկանիս՝ դեռ նոր պիտի գտնեն, քեզ ինչ է գրած։ Անա սրանով կարդալը տարբերվում է գրելուց եւ անհամեմատ դժուարանում։ Այդ դժուարութեան առաջքն առնելու եւ կարդալը գիտակցական անելու համար՝ պէտք է նորոյսներին սովորեցնել նաև անծանօթ բառերի լանկելը, որ նրանք կը լինի հնջիւններ բառերի վանկելու, կերպը, որ նրանք կարողանան բառի սկզբանը վանկելով—եւ այն միշտ վանկելով—կարդալ. որ նրանց համար կարդալն ենս նոյնափի հեշտանայ, ինչքան եւ գրելը, եւ՝ որ ա-



505
39

Доз. Цензурою. Тифлисъ, 4 Апрѣля. 1885 года.

Tip. M. Вартанянца, prot. Тройц. ц. д. № 11

բաւելն է եւ ամենազիստորը, կարդալը դառնայ զ ն ն ա կ ա ն եւ գիտակ ցական, եւ ոչ մը ի ն ու կ րաւ ո ր ա կ ա ն:

Այս դասերն առաջարկելով վարժապետներին իրեւ օրինակ միայն, թէ մօտառքապէս ինչից պէտք է սկսել մեր կարծիքով եւ ինչպէս, իսկ ժամանակի միջու որոշումը, թէ երբ պէտք է սկսել, բողոք ենք իւրաքանչիւր վարժապետի յարմարադատութեանը. բայց այն վարժապետները, որոնց համար անձանօր բան չէ այս առաջարկութիւնը եւ սովորութիւն ունին խմբովին տակ տով^{*)} կարդացնելու, նրանք կարող են ամենայն նեշտութեամբ անզիտակցական տակտը փոքր առ փոքր զիտակցականի վերածել, եւ այսպէսով առաջին երեք դասի նիւթը առաջին տարուայ երկրորդ կեսամեակում սորվեցնել, իսկ միաս երեք դասը երկրորդ տարուան ճգել իւրանց կրկնութիւններով եւ վարժութիւններով, որի հետ հոգ կըտանեն անշաշտ եւ լաւ կարդայուն, որ կըլինի գեղեցիկ առողջանութեամբ եւ հասկանայով կարդացածի միտքը:

Բոլոր դասերը հիմնուած են միայն մի կանոնի վրայ— „Բադայնը կազուում է իրանից յետոյ եղած ճայնառորին. իսկ իրանից առաջ եղած ճայնառորին կազում է միայն այն ժամանակ, երբ իրանից յետոյ զիր չըկայ կամ եղածը ճայնառ չէ. այդ պատճառով երկու ճայնառորի մէջ եղած մեկ կամ մի քանի բաղանայններից միայն վերջինն է կազում յաջորդ ճայնառորին։ Ահա այս հանգամանքը ի նկատի առած՝ ես կազմեցի առաջարկեալ դասերը։ Միւնոյն կանոնից օգուտ բաղելով՝ ուրիշները կարող են եւ ազատ են այլ մենով դիմել բուն նպատակին, որ է՝ զննական եւ զիտակցական առնելի կարդայի եւ ՀՆԱԲ տայ աշակերտին որքան կարելի ե շուտով ազատուելու այլոց բելադրութեամբ կարդայուց։ Ցիշեալ կանոնը առաջին երեք դասի մէջ պարզուած է. վերջին երեք դասը աւելի վերաբերում են լեզուի նրբութիւններին, որոնցից միայն մի քանիսը մէջ բերինք՝ ցոյց տայու համար, թէ վարժապետները պէտք է առանձին ուշադրութիւն դարձնեն նաև այդ հանգամանքի վրայ։

Դ. Ա.

(*) Տակտով կարդացնելը նոյն է, ինչ որ տակտով գրել տալը. զանազանութիւնն այնքան է միայն, որ գրել տալիս արմատական գծերի թիւն է առնվում ի նկատի, իսկ կարդացնելիս՝ ամբողջ վանկի տառերի թիւը։

ԱՌԱՋԻՆ ԴԱՍ

—Երեխէք, ես այսօր պէտք է սորվեցնեմ ձեզ, թէ ինչպէս պէտք է վանկելով կարդալ։ (Արկնում շատերը, թէ ի՞նչ պէտք է սորվեցնէ վարժապետը)։ Դուք բերանացի ձեզ առաջարկուած բառերը շատ լաւ էք վանկում. որոշումէք ամեն մի վանկի հընչիւնները և ուղեղ գրում. բայց գրքի մէջ եղած բառերը կամ ուրիշ գրածը, շատ անգամ նոյնիսկ ձեր գրածը չէք կարողանում ուղեղ վանկելով կարդալ այլ շատ գժուարութեամբ և շատ սխալ ու անկանոն։

—Դուք հօ գիտէք, թէ մը ո՞ր գրերն են ձայնաւոր ասվում և որոնք բաղաձայն։ (Հարցուփորձ և կրկնութիւն ձայնաւորների և բաղաձայնների վերաբերութեամբ. ձայնաւորների կարգում են երկրարրառները և այլ ոյ մասնիկները)։

—Ըատ լաւ. տեսէք ահա ես գրատախտակի վրայ կըգրեմ մի բառ։ (Գրումէ քարից։ Ըատերն անհամբերութեամբ ըլընջում են „բարի“)։ Ճշմարիտ է, ես գրել եմ «բարի» բայց դուք ինձ այն ասացէք, ինչ որ ես ձեզ կըհարցնեմ։ Այստեղ քանի ձայնաւոր կայ. քանի բաղաձայն. ո՞րն է առաջին ձայնաւորը, երկրորդը. առաջին բաղաձայնը, երկրորդը։ Ըատ լաւ։ Ես հիմա այս բառը կըգրեմ վանկ-վանկ, որ տեսնենք աշքով, թէ ինչպէս է վանկվում։

ԲԱՐ-ԲԻ

Լաւ նայեցէք. այստեղ թէ առաջին վանկը և թէ երկրորդը ձայնաւորով են վերջացած. այնպէս չէ. բար-բի։ Առաջին բաղաձայնը իրանից յետոյ եղած ձայնաւորին է կպել երկրորդ բաղաձայնը նմանապէս իրանից յետոյ եղած ձայնաւորին է կպել. Կպելին է արդեօք այսպէս վանկել.

ԲԱՐ-ԱՐԻ

ԲԱՐ-Ի

—Ինչո՞ւ չէ կարելի. հապա ինչպէս պէտք է լինի. ինչո՞վ է սխալ առաջին ձեր, երկրորդը. ճշմարիտ է, սխալ են վանկուած գրանք, որովհետեւ այդպէս չենք ասում, այլ ասում ենք բար-բի։

Թայց դուք կարդալիս միշտ այդպիսի սխալներ էք անում։ Որ էլ այդպիսի սխալ չանէք, պէտք է միայն մի բան գիտենաք և լաւ յիշէք, որ բաղաձայնը կպչում է իրանից յետոյ եղած ձայնաւորին։ Ո՞վէ կարող կրկնել ասածս։ — Էւզումը է իրանից յետոյ եղած յայնաւորին։ (Կրկնումեն առանձին առանձին և միասին)։

— Եթէ լաւ, յիշէք որ բաղաձայնը կպչում է իրանից յետոյ եղած ձայնաւորին, դուք շատ հեշտութեամբ կրգանէք բառի առաջին վանկը, յետոյ երկրորդը և երրորդը։ Տեսէք ահա ես երկու բառ կըգրեմ այստեղ։

1. ասա

2. կատու

— Ո՞րն է առաջին բառի առաջին վանկը։ Ինչո՞ւ համար ա՛, և ոչ աս։ — Որովհետեւ չենք ասում աս—ա, այլ ա—սա—Ոչ, այդպիս չըպէտք է պատասխանէք, այլ թէ՝ «որովհետեւ բաղաձայնը կպչումէ իրանից յետոյ եղած ձայնաւորին»։ Այստեղ սըն բաղաձայն է և իրանից յետոյ ունի ա ձայնաւորը, ուրեմն նա պէտք է կպչի ոչ թէ իրանից առաջ եղած ձայնաւորին, այլ իրանից յետոյ։ Ուրեմն նորից բացատրեցէք ինձ պատճառը։ Ինչո՞ւ համար պէտք է ասենք առաջին վանկն է ա՛, և ոչ աս։ (Կրկնում են պատճառը)։ Շատ լաւ։ Հիմա գտէք երկրորդ բառի առաջին վանկը։ Ինչո՞ւ համար կա, և ոչ կատ։ (Որովհետեւ բաղաձայնը պէտք է կպչի իրանից յետոյ եղած ձայնաւորին)։ Շատ բարի, հիմա լաւ ասացիք։ Ես կըգրեմ դարձեալ երկու բառ։

1. մատանի

2. եկեղեցի

— Գտէք առաջին բառի առաջին վանկը (պատճառ)։ Երկրորդ վանկը։ (պատճառ)։ Երրորդ վանկը։ (ինչո՞ւ համար)…

— Գտէք երկրորդ բառի առաջին վանկը։ Ինչո՞ւ համար ե՛, և ոչ եկ։ Գտէք երկրորդ վանկը։ Ինչո՞ւ համար կե, և ոչ կեղ…։ Այժմ վանկեցէք այդ բառը, իսկ ես կըգրեմ ձեր վանկածի պէս։

Ե—ԿԵ—ՂԵ—ԳԻ

— Տեսնումէք, երեխէք, ինչպէս ամեն մի բաղաձայն կպել է իրանից յետոյ եղած ձայնաւորին։ Բայց առաջին վանկը մենակ է մասցել։ Գիտէք ինչու, որովհետեւ դա ձայնաւոր է։ իրանից յետոյ եղածը բաղաձայն է։ իսկ նրանից յետոյ եղածը դարձեալ

ձայնաւոր է։ բաղաձայնը՝ գտնուելով երկու ձայնաւորի մէջ տեղ, որ ձայնաւորին է կպել։ իրանից առաջ, թէ՞ իրանից յետոյ։

— Հիմա ինչ բառ որ ես կըգրեմ, երեխէք, ոչ ոք չկարգայ, եթէ կարողանայ ել։ (Տիրում է լուսնիւն. գրում է գիտութեամբ մի երկայն և դժուար կարդալու բառ, օրինակ՝

ամենամեծարելի

Դուրսէ կանչում ամենից թուլերին և կարդալուց վախցածներին, կակաղղներին և հետևեալ հարցուփորձն է անում։

— Ո՞վէ կարող գտնել սրա առաջին վանկը։ (ոմանք ասումեն ա՛, և ոմանք ամ)։ Հիմա ի՞նչպէս իմանանք, թէ ո՞րն է ուղիղը։ Արշակ, դու ինչո՞ւ համար ես ասում ա՛, և ոչ ամ։ (չըգիտէ պատճառը, ենթադրումէ միայն)։ Սարգիս, դու ինչո՞ւ համար ես ասում, ամ։ և ոչ ա՛. (չըգիտէ)։ Բայց դուք ձանաչո՞ւմ էք արգեօք սրա մէջ եղած ձայնաւորները։ (Հարցուփորձ ձայնաւորների և բաղաձայնների)։ Շատ լաւ։ Հիմա միտներդ բերէք, որ բաղաձայնը կպչումէ իրանից յետոյ եղած ձայնաւորին։ Եթէ այդպէս է, ուրեմն ո՞րը կըլինի սրա առաջին վանկը, ա՞ թէ ամ։ (Մեծամասնութիւնը և յետոյ ամենքը վճռումեն, որ պէտք է ասել ա և ոչ թէ ամ, և բացատրում են պատճառը)։ Ճշմարիտ է, պէտք է ասել ա՛, և ոչ թէ ամ։ Ես խօմ չեմ ասել թէ ձայնաւորը կպչում է իրանից յետոյ եղած բաղաձայնին, այլ թէ բաղաձայնն է կպչում իրանից յետոյ եղած ձայնաւորին։ Դուք ուղիղ գտաք առաջին վանկը, բայց կարո՞ղ էք, առանց միւս վանկերը գտնելու, ասել ինձ, թէ ո՞րն է այստեղ վերջին վանկը. (ամենքն են մասնակցում այդ հարցերի պատասխանին)։ Ո՞վ կարող է մէջ տեղից մի վանկ գտնել, որ ուղիղ լինի. ո՞վ կարող է երրորդ վանկը գտնել. երկրորդը. չորրորդը. վեցերորդը. հինգերորդը. առաջինը. երկրորդը... շարունակ։ (Բոլոր հարցումներին պատասխանումեն և սխալ և ուղիղ։ Բայց ինչպէս վարժապետը, նոյնպէս և աշակերտները՝ հնար սանին ապացուցանելու, նե սիան ինչո՞ւ է սիալ և ուղին ինչո՞ւ է ուղիղ, հիմնուելով այն կանոնի վրայ, որ բաղաձայնը (երբ նա երկու կողմից էլ ձայնաւոր ունի) ի՞նչո՞ւ է իրանից յետոյ, եղած ձայնաւորին, որով վերջ ի վերջոյ շտկում են իրանց միտալը և ուղիղ վանկելով կարդում)։

— Այժմ դուք միաձայն վանկեցէք այդ բառը, իսկ ես կըգը

բեմ վանկ-վանկ։ Երեխեքը կարդով վանկում են և վարժապետը գրում է։

ա-մե-նա-մե-ծա-րե-լի

—Տեսնում էք, երեխեք, ինչպէս կարդով բոլոր բաղաձայն-ները կպել են իրանցից յետոյ եղած ձայնաւորին, բայց ան մենակ է ֆացել. ինչո՞ւ . . . (Պատասխանում են)։

Վարդառին. Գրումէ դաստան տախտակի վրայ այս կանոնին ենթարկուող շատ բառեր և գուրս կանչում ըստ մեծի մասին թոյ-լերին և կարդացնել տալիս ուղղակի վանկելով։ Աչա օրինակի համար այդպիսի բառեր՝ Կատարինէ, Երանուհի, կաթուղիկէ, մանուշակը, պատուհանը . . .

Վերջունուրին, Ի՞նչ սովորեցնինք մենք այս դասին. Որ՝ ուստացած ի՞նչո՞ւ է երանէց անու ելուծ յոյնուրին։

ԵՐԿՐՈՐԴ ԴԱՄ

(Համառօտ հարցուփորձ նախընթաց դասի).—Ճշմարիտ է։ բաղաձայնը կպչումէ իրանից յետոյ եղած ձայնաւորին. Բայց զիտէք, երեխեք, ես չիմա այնպիսի բառեր կըգրեմ; որ բաղաձայնը կպած լինի իրանից առաջ եղած ձայնաւորին։ Աչա ձեղ՝ աղ, օղ, օր, օձ, ես, այս, հաց, ջուր, եղ, կաթ, սեղան, աթոռ, բանոն, Մանուշակ, Գարեգին . . .

(Կարդացնելուց և վանկել տալուց յետոյ հարցումէ.՝ Ի՞նչ գրով են վերջացած այդ բառերը, թէ բաղաձայն։ Այդ բաղաձայններից յետոյ ձայնաւորներ կան։ Եթէ լինէին, ի՞նչ էք կարծում, դրանք էլ կըկպչէին իրանցից յետոյ եղած ձայնաւորին, թէ չէ. Ի հարկէ կըկպչէին։

Հաց բառի վերջումը ի՞նչ բաղաձայն կայ. (յը). Եթէ այդ ցըից յետոյ մէկ ի աւելացնենք և վանկենք, այն ժամանակ այդ ցըն իին կըկպչէ, թէ ոչ. վանկեցէք և կըտեսնէք։ Բայց որ աւելէ լւա տեսնէք, կըզբեմ ձայնաւորով և առանց ձայնաւորի։

Հաց, Հացը

սեղան սեղանի

հա-ցը

սե-ղա-նի

Աւելին, եթէ բաղաձայնը բառի վերջն է ընկած, էլ իրանից յետոյ ձայնաւոր չկայ, խօմ չենք դէն դցելու, պէտք է թողենք

որ կպչի իրանից առաջ եղած ձայնաւորին։ Այս էլ պէտք է գիտենաք, որ բառի վերջն ընկած բաղաձայնները մազի չափ չեն դըժուարացնում կարդալը. դժուարը մինչև նրանց հասնեն է. երբ որ մինչև վերջը համում ենք, նրանք իրանց հասկացվում են. Բառերի վերջին վանկն էլ է հետութեամբ իմացվում։ Միթէ դուք չէք կարող իմանալ եթէ ես ձեզ ծանօթ բառերը կիսատ ասեմ. օրինակ, ի՞նչ կըհասկանաք, եթէ ասեմ մանուշ . . . (պատասխանում են մանուշակ), եկեղեւ . . . (ցի), պատու . . . (հան), քահա . . . (նայ), տիրա . . . (ցու), գրատախ . . . (տակ), Կատարի . . . (նէ). ես գնացի ուսում . . . (նարան). . . Տեսնումէք ինչքան հետ է. Հարկաւոր է ուրեմն բառի սկզբի վանկը ուղիղ կարդալ. եթէ շատ երկար է, երկրորդ վանկն էլ և այնուհետեւ բանը կըհետանայ։

—Ես չիմա ձեզ մի քանի բառեր կառաջարկեմ, իսկ դուք լուծեցէք. (Առաջարկումէ վերջումը երկու բաղաձայն ունեցող միավանկ բառեր, ինչպէս՝ մարդ, վարդ, զարդ, շարժ, փառք, կառք, տուրք, զօրք, հանդ, բանտ, սանդ, թունդ, ձիշտ, վիշտ, հաշտ, տաշտ, գաշտ, կոշտ, բախտ, թուղթ, հետ, խելք, շեմք, մամք, կամք երգ, բերք, ձեռք, արտ, մարտ, սիրտ . . .):

—Դուք տեսնում էք, որ այդ բառերի վերջումը երկու բաղաձայն կայ, բայց երկուսն էլ կպել են առաջ եղած ձայնաւորին. Փորձենք զրանց էլ վերջումը մի ձայնաւոր աւելացնել տեսնենք այդ բաղաձայններն էլ կըկպչէն իրանցից յետոյ եղած ձայնաւորին. Դուք աւելացրէք մէկ և կամ է և այնպէս վանկեցէք, իսկ ես կըգրեմ առանց վանկելու և ձեր վանկածի պէս.

վարդ վարդի վար-դի

զօրք զօրքը զօր-քը

—Լաւ նայեցէք, երեխեք, երկու բաղաձայն միասին չեն կըպչում իրանցից յետոյ եղած ձայնաւորին. այլ միայն վերջինն է կըպչում։ Դուքս է գալիս գարձեալ մեր առաջուան ասածը, թէ բաղաձայնը կպչում է իրանից յետոյ եղած ձայնաւորին, իսկ եթէ շըկայ ձայնաւոր (կամ եղածը ձայնաւոր չէ), կպչում է իրանից առաջ եղած ձայնաւորին։

—Ես էլի մի քանի բառեր կառաջարկեմ, իսկ դուք վանկեցէք. (Առաջարկումէ բերանացի վանկելու հետևեալ բառերը, որոնց մէջ երկու բաղաձայն իրար մօտ են եկած, ինչպէս՝ Արշակ,

Մարգարիտ, Յովհաննես, կարկուտ, տախտակ, անտառ, բախտաւոր . . .):

Հաա լաւ, շատ ուղեղէք վանկում. բայց որովհետև աչքով չէք տեսնում, թէ ինչպէս էք վանկում, ես հիմա այդ բառերից կըդրեմ անվանկ և վանկած.

Արշակ Արշակ տախտակ տախու—տակ

Տեսէք ահա Արշակ բառի մէջ երկու բաղաձայն գրեր իրար մօտ են եկած, բայց վանկածում դրանք իրարից բաժանուել են. Ո՞ր գրերն են դրանք: Ի՞նչ բաղաձայներ կան իրար մօտ եկած տախտակ բառի մէջ. ի՞նչպէս են բաժանուել... Աչա այդպէս են բաժանվում բոլոր այն բառերը, որոնցում երկու ձայնաւորների մէջ երկու բաղաձայն են ընկած՝ մէկը կպչում է իրանից յետոյ եղած ձայնաւորին, իսկ միւսը՝ որ իրանից անմիջապէս յետոյ ձայնաւոր չունի, կպչումէ իրանից առաջ եղած ձայնաւորին:

Հատ է պատահում, որ երկու ձայնաւորի մէջ երեք բաղաձայն էլ է լինում, բայց միայն վերջինն է կպչում իրանից յետոյ եղած ձայնաւորին, իսկ միւս երկուսը, որոնք անմիջապէս իրանցից յետոյ ձայնաւոր չունին, կպչում են առաջին ձայնաւորին. Աչա ձեզ այդ տեսակ բառեր.

Թարգմանիչ Թարգ—մանիչ մարդկութիւն մարդ—կութիւն*)

Աերջաբանութիւն: Մենք այս դասից ևս այն կանոնը դուրս բերինք, ինչ որ Նախընթաց դասին: Ուրեմն պէտք է էլի կրկնենք— բաղաձայնը կպչումէ իրանից յետոյ եղած ձայնաւորին, իսկ եթէ իրանից անմիջապէս յետոյ ձայնաւոր չըկայ (այլ եղածը բաղաձայն է), պէտք է կպչի իրանից առաջ եղած ձայնաւորին:

ԵՐԵՌԴԻ ԳԱՍ

(Կամառօտ հարցուփորձ նախընթաց դասերի).—Ուրեմն գուք հիմա գիտէք, թէ բառի մէջ եթէ երկու և երեք բաղաձայն իրար մօտ լինին եկած՝ ի՞նչպէս կըկարդացուին. Ես հիմա պէտք է ցոյց տամ ձեզ, թէ ինչպէս են կարդացվում այն բառերը, որոնց սկզբումը երկու բաղաձայն կայ: Գրենք ահա այս տեսակ մի քանի բառեր: Ես գրելիս բարձր կասեմ, իսկ գուք վանկեցէք.

Բժիշկ, զնաց, գդում, զկեռ, թխած, ժլատ, լսել.
Բ—ժիշկ, գ—նաց, գ—գդում, զ—կեռ, թ—խած, ժ—լատ, լ—սել.
Բը—ժիշկ, գը—նաց, գը—գդում, զը—կեռ, թը—խած, ժը—լատ, լը—սել....

—Որ շատ չըխօտենք, երեխէք, գուք տեսնում էք, որ այս բառերի սկզբում երկու բաղաձայն իրար մօտ են եկած. գրանցից երկրորդը, ինչպէս գիտէք, կպչումէ իրանից յետոյ եղած ձայնաւորին. առաջնը մնում է մենակ, Այդ մենակ մնացող բաղաձայնները ուղեղ իրանց անունովն են հնչվում, այսինքն ըի օգնութեամբ ասվումեն բը, գը զը, թը, ժը, լը....

Հիմա գրենք այնպիսի բառեր, որոնց սկզբումը երեք բաղաձայն կայ: Ես բարձր կասեմ, գուք վանկեցէք. բայց ես առանց վանկելու պիտի գրեմ. (Գրում է՝ բռնել գջլել դրգալ զրկել թուչուն, ժժմակ, լրտես, խնդիր, ծպտած, կրկին, հրդեհ, ձկնորս, ճմուկը մկրատ, նշնել շրջել, չղջեկ, պստիկ, ջրցան, սգւոր, վնգալ տրտունջ, ցրտած, փրկիչ, քրդի....

—Երբ որ բառի սկզբումը երկու բաղաձայն կար, քանիսից մի վանկ շինեցինք:—Մէկից:—Ինչո՞ւ մէկից և ոչ երկուսից:

—Որովհետև երկրորդը կպաւ իրանից յետոյ եղած ձայնաւորին:

—Ուրեմն այստեղ էլ որ երեք բաղաձայն կայ, մենք քանիսից պիտի մի վանկ շինենք:—Երկուսից:—Ինչո՞ւ երկուսից և ոչ երեքից:

—Որովհետև երրորդը պիտի կպչի իրանից յետոյ եղած ձայնաւորին.—Բայց ի՞նչպէս պիտի մի վանկ շինենք:—Պէտք է մի ը աւելցնենք:—Ո՞րտեղ:—Առաջին բաղաձայնից յետոյ:—Եւ այնուհետև բռնել բառի առաջին վանկը կը լինի^o...—Բը լը... (նել), գըլ... (լել), գըր... (գալ), զըր... (թըլ)... ժըլ...

(*) Հայերէն լեզուի մէջ երեք կից բաղաձայներից մէկը առաջ հնը կամ երրորդը, ըստ մեծի մասին կամ ու է կամ ու: (Տես այս մասին հւ քննական քերականութիւն Հ. Ա. Այտնեանի, երես 347):

—Երեխէք, այդ մենք զօռով չենք աւելացնում, այլ դա կայ. միայն չի գրվում շուտ գրելու համար: Այդպէս տեղերում ասում են չ սղուածէ, այսինքն կայ, բայց չի գրած: Այնքան լաւ է, որ միւս ձայնաւորներն ել ըի պէս չեն սղել: Ճշմարիտ, եթէ բռնել բառի մէջ սղուածը և չըլինէր, այլ ա՛, ի՞նչ կըկարդայինք: —Բառնել: —Իսկ եթէ է՛, —Բէռնել: —Եթէ ի՛: —Բիռնել: —Եթէ ո՛ւ: —Բուռնել: —Տեսնում էք: Ի՞նչ կըլինէր ուրեմն մեր ճարը, եթէ բոլոր ձայնաւորները սղուէին. այն ժամանակ մենք ամեն մի այդպիսի բառ մինչև տասը ձեռով կըկարդայինք և չէինք իմանալ թէ ո՛րն է ուղեղը: Բայց յիմա չեշտ է նրանով, որ առաջուց գիտենք, թէ սղուածը ուրիշ ձայնաւոր չէ, այլ ըն է, և նրա օգնութեամբ էլ կարդում ենք: Եթէ այդպիսի տեղերումը մենք ամեն մի բաղաձայնից յետոյ մի և աւելացնենք, շատերը սիսալ կըկարդացուին, իսկ շատերը թէպէտ ուղիղ, բայց տղեղ կըլինին, այդ պատճառով երեք բաղաձայն եղած ժամանակ միայն մէկ և կաւելացնենք, որով այդ տեսակ բառերը այնպէս կըկարդացուին, ինչպէս մէջ տեղում իրար մօտ երկու բաղաձայն ունեցողները:

Օրինակ՝

տախտակ
բըռնել

տախ - տակ
բըռ - նել

~~~~~

### ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ ԵՐՐՈՐԴ ԴԱՍԻ

—Հիմա տեսնենք ի՞նչպէս են վանկում սկզբում չորս բաղաձայն ունեցող բառերը: Ի՞նչ էք կարծում, եթէ սկզբումը ձայնաւորից առաջ չորս բաղաձայն իրար մօտ լինին եկած, քանի զրեց մի վանկ կըշինուի: —Երեք: —Ինչո՞ւ երեք, և ոչ չորս:

—Որովհետեւ չորրորդը կըկըպչի իրանից յետոյ եղած ձայնաւորին: —Այդպէս է: Ուրեմն ես կասեմ ահա մի քանի բառեր, դուք վանկեցէք, իսկ ես կըգրեմ: (Գրում է չետեւեալ բառերը) — քրտն...ել, խրտն...ել, փնտր...ել, խնդր...ել, թռչն...իկ, մրջն...իկ, սրտն...եղ, յրկն...ութիւն....

—Գրածս նորից կարդացէք և ուղիղ վանկեցէք, իսկ ես էլլ կըգրեմ: (Գրում է չետեւեալ ձեռով) —

Քըրտ - նել, իւրբու - նել փընտ - րել, իւընդ - րել, թըռչ - նիկ... —Տեսէք, երեխէք, այս բառերն էլ ընդրուելուց յետոյ այնպէս են վանկուել ինչպէս մէջերում երեք կից բաղաձայն ունեցող բառերը: Ահա ձեզ օրինակ, նայեցէք.

կըրկնութիւն  
վերջնական

կըրկ - նու - թիւն  
վերջ - նա - կան

—Երեխէք, այս բառերը գրելիս այս բոպէիս մի լաւ բառախաղ միտըս ընկաւ, եթէ ուզէք, ձեզ էլ կըսորվեցնեմ: (Երեխայքը հետաքրքրութեամբ ցանկութիւն են յայտնում): —Կարդացէք այս քրտն... սիրտն... բառերը, մինչև կետերը միայն, և տեսէք քանի վանկ են դառնում: (Կարդում են քըր - տըն, իւրբ - տըն... դուրս են գալիս երկերկու վանկ): —Հիմա կարդացէք առանց վերջին գրերի: (Կարդում են ինչպէս քըրտ, իւրբտ... բոլորն էլ դառնում են մի մի վանկ): Տեսնում էք, որ մի գիր պակասեցնելով, այն էլ բաղաձայն գիր, մի վանկ պակասեց: Կարելի է կարծում էք, թէ միշտ այդպէս կըլինի: Կարդացէք ահա այս բառը.

սանդուկ (սան, սանր, սանձ, սանն):

Դա մի վանկ է, այնպէս չէ. վերցրէք զն և այնպէս կարդացէք: (Վերցնում են, գարձեալ մնումէ մի վանկ): Հիմա փոխանակ գրէ՛ գրէ՛ ըլ: (Կարդացվում է սանր, իրը երկու վանկ): Հիմա փոխանակ ըլի՛ գրէ՛ ձը: (Գառնում է սանձ, և կարդացվում է ինչպէս մի վանկ): Հիմա փոխանակ ձըի՛ գրէ՛ էլի նը: (Գուրս է գալիս սանն և կարդացվում է ինչպէս երկու վանկ):

—Որ շատ չերկարացնեմ: Երեխէք, պէտք է ասեմ, որ ըըն և նըն միւս բաղաձայնների նման չեն, զրանք վանկի վերջումը բաղաձայնից յետոյ կարդացվում են ինչպէս ը՛ր, ը՛ն: Քըրտ... և իւրբտ... կիսատ բառերը մի մի վանկ են դառնում: Բայց եթէ այդ բառերի մէջ երրորդ զիրը լինի կամ ըը և կամ նը, այն ժամանակ փոխանակ մի վանկի՝ երկու վանկ կըդառնան: Փորձեցէք, օրինակ, երրորդ տեղը ըըն գնել և փոխանակ գրելու քրտ: Գրել քարտ, փոխանակ խրտ: Խրտ: (Ամեն բառերում տեղափոխելով փորձում են և ամեն անգամ մի վանկ աւելանում է):

—Հիմա չէք զարմանալ ուրեմն, եթէ ես գրեմ սկզբումը դարձեալ չորս բաղաձայն ունեցող բառեր, բայց որ փոխանակ մի վանկ դառնալու, դառնան երկու վանկ: Եւ այդ այն ժամանակ կը-

լինի իշարկե, երբ որ երրորդ գիրը լինի կամ ըը, և կամ նը, Աչա կասեմ բարձր, դուք վանկեցէք, իսկ ես կըգրեմ... Մկր... տիչ, կար... տել փշր... տել, զկր... տալ, ծղր... տալ շպր... տել հրն... դել սրն... դի, բրն... ձի, մկն... դել, պղն... ձի, զբն... դալ դրն... դալ...

—Աչա, ինչպէս տեսնում էք, այս բառերի մէջ երրորդ բաղաձայնը լինելով ըըն և նըն՝ մի մի վանկ աւելացնում են և կարդացվում Մ—կր—տիչ, զ—րն—գալ՝ այսպէս ել միւսները, ինչպէս որ վանկեցիք, Եթէ դրանցում երրորդ գիրը չըլինէր ըըն կամ նըն, դրանք ել այնպէս կըվանկուէին ինչպէս քրտնել խըրտնել. Օրինակ, եթէ փոխանակ մկր՝ լինելու՝ լինէր «մրկ», որ ելի միւսոյն դրերն են միայն յետուած ընկած, այն ժամանակ, ինչպէս տեսնում էք, դա կըդառնար մի վանկ. Օրինակի համար՝ զըն... զըն... սրն... պղն... կարդացէք աջեց գէպի ձախ և կըտեսնէք, որ միմ վանկ են դառնում, ինչպէս նղպ, նրս, նրդ, նրզ....

Ուրեմն սկզբումը ձայնաւորից առաջ չորս բաղաձայններից երեքը գառնում են մի վանկ, իսկ չորրորդը կպչումէ իրանից յետոյ եղած ձայնաւորին. Բայց այն բառերը, որոնցում երրորդ բաղաձայնը կամ ըը է կամ նը, նա փոխանակ մի վանկ դառնալու դառնում է երկու վանկ, որովհետեւ ըըն և նըն վանկի վերջումը բաղաձայնից յետոյ կարդացվում են ինչպէս ը'ը և ը'ն, և այդ պատճառով էլ մի վանկ կամ ի՞ն վանկ աւելացնում են, ինչպէս հետեւալ միավանկ բառերում են աւելացնում—եղր, իրր, լիտր, ծանր, կուպր, ջեգր, փոքր, մեղր... եղն, ձուկն, մուկն, եօթն, դառն, մասն, դառն, կուռն փուռն, անձն....

—Հիմա, երեխէք, եթէ ես կամ մի ուրիշը ձեղ հարցնենք, թէ այդ մկր և զըն ոչ թէ պիտի կարդացուին մը—կըր և զը—ըըն, այլ մըկ—ըը և զըր—նը, կարող էք ապացուցանել որ ձեր ասածն է ուղիղ, իսկ մերը սխալ է. Դու ի՞նչ կասես, Արամ.

—Ես... կասեմ, վարժապետ, որ մերն ուղիղ է:  
—Ինչո՞վ կըհասատես, որ ձերն ուղիղ է:  
—Ես... վարժապետ, կասեմ...  
—Ի՞նչ կասես:  
—Կասեմ... ը'ը, ը'ն...  
—Է՞, յետո՞յ:  
—Կասեմ վանկի վերջումը... ը'ը, ը'ն...

—Մինաս, ինչո՞ւ ես ծիծաղում Արամի վրայ, գե գու ա- սա տեսնեմ:  
—Ես չեմ ասիլ, վարժապետ...  
—Ի՞նչ չես ասիլ  
—Ես չեմ ասիլ՝ մկրը...  
—Հապա ի՞նչ կասես:  
—Ես կասեմ Մկրտիչ...  
—Է՞, երեխէք, յօգնել էք, երեի գասը շատ էր երկար, Դէ մէկ երգ երգեցէք, վերջացնենք....

### ԶՈՐՌՈՐԴ ԴԱՍ

(Համառօտ հարցուփորձ նախընթացի): —Երեխէք, որովհե- տեւ ըըի մասին այսչափ խօսեցինք, ուզում եմ այս դասին դրա Փ ուրիշ յատկութիւնն էլ ցայց տալ ձեզ. Դուք արդէն գիտէք, որ երբ երկու ձայնաւորի մէջ երկու կամ երեք կից բաղաձայններ են լինում, նրանից միայն վերջնն է կպչում իրանից յետոյ եղած ձայնաւորին, իսկ միւսները կպչում են նախորդ վանկին, ինչպէս օրինակ, աչա այս բառերը տախտակ (տախ—տակ), գործնական, (գործ—նական). Հիմնա պէտք է ձեզ ասեմն որ այդպիսի տեղե- րում եթէ երկու կամ երեք կից բաղաձայնների վերջինը ըը է, նը- րա հետ կարելի է և իրանից առաջ եղած բաղաձայնը տալ յա- ջորդ վանկին, այսինքն ըըն իրանից յետոյ եղած ձայնաւորին կըպ- չչելիս, իր հետ կարող է տանել և իրանից առաջ եղած բաղաձայ- նը. Աչա ձեզ օրինակ.

ապրիլ ապ—րիլ ա—պրիլ  
սանդրել սանդ—րել սան—դրել

Այս բառերը, ինչպէս տեսնում էք, կարող էք վանկել երկու կերպ, ինչպէս որ ձեղ համար հեշտ կըհամարէք. Բայց թէ ինձ կը- հարցնէք, թէ գու ի՞նչպէս ես անում, կամ քեզ համար ի՞նչպէս է հեշտ. ես կասեմ որ ինձ համար երկրորդ ձեռվ վանկելը համ հեշտէ, համ լաւ. Բայց որովհետեւ ձեղ համար գեռ այնքան հեշտ

չի լինիլ քանի որ բոլոր միւս բաղաձայնները այդպէս հեշտ չեն վանկվում, այդ պատճառով ես ձեզ աղատութիւն եմ տալիս որ ինչպէս կամենաք, այնպէս վանկեք. միայն երբ որ բառը ձեզ ծանօթ է, պէտք է ամբողջն այնպէս կարգաք, որ բըից առաջ եղած բաղաձայնը ըլի հետ միասին կպչի յաջորդ վանկին. Որ լաւ իմանաք ասածն, ես մի ուրիշ օրինակ կըրերեմ, որ համ օրինակ լինի, համ մի նոր բան ել սովորեք.

(գրումէ)

Հայրն ու մայրը  
Արշակն ասաց  
Երեսն ուռել է  
Երկու մասն իմ է  
Փոքր աղջիկը  
Մեղր է կերել  
Դու կարգումն

(կարգումն)

Հայր—նու մայրը  
Արշակ—նասաց  
Երես—նուռել է  
Երկու մաս—նիմ—նէ  
Փոքր—րաղջիկը  
Մեղր—բէկերել  
Դու կարգու—մն

—Տեսնումէք ահա գրումենք-բաժան բաժան, բայց բառերի վերջն ընկած բաղաձայնները փախչում կպչում են յետոյ եղած բառերի սկզբում եղած ձայնաւորին, և հետո հայրը ու մայրը կամ դու կարգումն ես, Ուղիղ այսպէս ել ահա՝ երբ որ երկու ձայնաւորի մէջ երկու կամ երեք կից բաղաձայններ կան, և վերջինն ըլ է, այդ ըլին պէտք է կտցնել իրանից առաջ եղած բաղաձայնը. Ահա ես երկու տեսակ ել կըրաժանեմ, դուք ինքները նկատեցք, տեսէք ո՞րն է աւելի լաւ.

(լաւ)

ու—կրացաւ  
Բա—գրատ

(վատ)

ոսկուրացաւ  
Բագուրատ

(Երեխանց ականջին լաւը լաւ է թւում, վատը՝ վատ):

—Ճշմարիտ որ այդպէս լաւ է, երեխէք. միայն այդպէս լաւ կարգալու համար պէտք է լաւ վարժուիլ, և ան այնպիսի բառեր, որոնք թէպէտ և կըվանկուին, բայց որ չվանկենք, աւելի գեղեցիկ կըկարգացուին. Օրինակ, մենք զընզալ բառը վանկեցինք այսպէս՝ զ—ըլն—գալ բայց աւելի լաւ կըլինի, եթէ վանկենք զըլն—գալ իսկ որա առաջին մասը փոխանակ վանկելու՝ զը—ըլնգ,

վանկենք՝ զըլնգ, որովհետեւ զընգ մի ամբողջ ձայն է և ոչ երկու, և շատ անգամ սաստկութեան համար կրկնվումէ, ինչպէս զըլնգ-զըլնգ, զըլնգ-դըլնգ, չըլիկ-չըռուիկ, կամ չըլիկ-չըլիկ- չըրուիկ, թրանիկ-թրուիկ, կամ թրընիկ-թրընիկ, թրանմի-թրումի, չըամփի-չըռումփի, չըլմփ-չըրըմփ . . . Ճշմարիտ՝ եթէ այս տեսակ բառերը փոխանակ վանկելու՝ չը—ըլնիկ-չը—ըլնիկ կալ վանկենք՝ չըլիկ-չըրըմփ-կալ աւելի թունդ կըլինի և կըտրուկ . . .

(Այսպիսի վարժութիւններով վերջացնումէ դասը):

### ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՍ

ան, չ, կ, ըզ, ըշ, ըս

(Համառօտ հարցուփորձ կարեոր գիտելիքների). —Երեխէք, ես համարեա թէ բոլորն ասացի, ինչ որ ասելու ունեի ձեզ վանկելու վերաբերութեամբ: Եթէ այդքանը յիշէք (իհարկէ ես էլ շուտ շուտ կըկրկնեմ մի անգամ ասածն), ել ոչինչ գժուարութեան չէք հանգիպիլ: Աշխատեցէք այնպիսի բառեր գտնել, որ իմ ցոյց տուած կանոնով չըկարգացուին. ես շատ ուրախ կըլինիմ և ցոյց կըտամ նրա ել կանոնն ու պատճառը. իսկ եթէ ինձ մօտ կարգալու ժամանակ կըհանդիպենք մի այդպիսի բառի, ես տեղնուտելի ցոյց կըտամ նրա և նրա պէս բառերի կարգալու կերպը. Իսկ հիմա ես հարկաւոր եմ համարում ձեր ուշագրութիւնը գարձնել ան, չ, կ' մասնիկների վրայ, երբ որ գրանք լինում են բաղաձայնից առաջ: Ասումենք, օրինակ՝ անտեղ, անդիր . . . ասացէք գուք ել այս տեսակ անով սկսուող բառեր (ասումեն շատ այդ տեսակ բառեր), Բաւական է, Եթէ անտուն բառը մեր գիտցած կանոնով վանկենք, ուղիղ կըլինի, կըդառնայ, անտուն, բոլորովին այնպէս ինչպէս վանկումն երկու ձայնաւորի մէջ եղած երկու կից բաղաձայնները ինչպէս տախտակ, վաստակ . . . բայց եթէ լինի աննշան, անբնակ, եթէ մեր գիտցած կանոնով վան-

կենք կըդառնան անր—նակ, անն—շան, որ ուղիղ չի լինիլ. Դը-  
րա պատճառն այն է, որ ան մասնիկը իր համար մի ջոկ բառ է,   
միայն ուրիշ ամբողջ բառի սկզբից կցուած: Որպէս զի վանկելու  
ժամանակ դա մեզ չըխանդարէ, մենք վանկելուց առաջ դրան  
կառանձնացնենք: Օրինակ, աննշան բառը կըդառնայ ան նշան, և  
կըվանկուի այնպէս, ինչպէս սկզբումը երկու բաղաձայն ունեցող-  
ները, այսինքն կըդառնայ նը—շան, ուրեմն ան—նըշան և ոչ անն—  
շան. այսպէս էլ անբնակ բառը կըդառնայ՝ ան—բը—նակ: Ուրեմն  
ինչպէս կըվանկէք և կըկարդաք աշա այս բառերը, (գրումէ տախ-  
տակի վրայ հետևեալ բառերի տեսակներից և կարդացնում):  
անմիթար, անտարունջ, անմտաբար, անմշակ, անգթաբար,  
անչրաման, անգրագէտ, անկրթութիւն, անմտերիմ...:

Հիմա գանք չը մասնիկին: Ասում ենք, օրինակ՝ չըդնաց, չխօ-  
սեց, չըզբեց, չըբերաւ չըտուած, չըխմած, չըհասած. ասացէք  
դուք էլ չըով սկսուող բառեր: (ասում են շատերը վարժապետի  
օգնութեամբ): Հիմա նայեցէք: Այդ չըն ձայնաւորից առաջ եղած  
ժամանակ միանում է նրա հետ ինչպէս՝ չարած, չասաց, չեկաւ,  
չունէր, չեմ գրել, չուզբեց, բայց երկու բաղաձայնից առաջ եղած  
ժամանակ պէտք է ան'ի պէս առանձնացնել, եթէ ոչ, ուղիղ վան-  
կելու և կարդալու դորժը կըխանդարէ: Օրինակ, դուք արդէն գի-  
տէք, որ բառի սկզբումը երբ որ երեք բաղաձայն են լինում, եր-  
բորդը կպչում է իրանից յետոյ եղած ձայնաւորին, իսկ առաջին  
երկուսը մի վանկ են դառնում, ինչպէս՝ սրբել (սըր—բել), գտնել  
(գրունել), եթէ ան մասնիկն ես կից բաղաձայն համարենք և այնպէս  
վանկենք, սխալ կըլինի: Օրինակ, եթէ այդպէս վանկենք, չթիմած,  
չխմած բառերը կըդառնան չըթ—խած, չըխ—մած, որ ինչպէս  
տեսնումէք, սխալ է. ուրեմն առաջ պէտք է չըն հեռացնենք և յե-  
տոյ մնացածը վանկենք այսպէս՝ չը թը—խած, չը խը—մած: Աւղիդ  
այսպէս պիտի անենք և կը մասնիկը, երբ որ նա լինում է երկու  
բաղաձայնից առաջ. ի՞նչպէս կըկարդաք այս բառերը՝ կըդիմ,  
կըմամ, կըմամ կըբանեմ, կըխնդրեմ, կըքըբրեմ, կըմկըբանմ;  
կըմեղագրեմ; կըկորտեմ; կըշպատեմ; կըհրնդեմ; կըկոխրտեմ...:

Ինչպէս որ ան, չը և կը մասնիկները բառերին կպչելով նը-  
րանց կանոնաւոր վանկուիլը խանդարումնեն, այդպէս էլ շատ ան-  
դամ երկու ջոկ-ջոկ բառեր միանում են իրար հետ և ուղիղ վան-  
կելու դորժը խանդարում: Օրինակ, մարդ և բնակ բառերը իրար  
վրայ բարդուելով՝ դառնում են մարդաբնակ: Ճէթ, նկար՝ ձիթա-

նկար. նոր, նշան՝ նորանշան. քար գրիչ՝ քարեգրիչ: Հիմա եթէ  
այդ տեսակ բառերը մեր գիտցած կանոնով վանկենք, կըդառնան  
մար—գար—նակ, ձիթան—կար, նորան—շան, քարեգ—ըիչ, որ ինչպէս  
տեսնում էք, սխալ կըլինին: Այդպիսի տեղերումը վերջին բառերը  
ինչպէս որ ջոկ եղած ժամանակ վանկում են, էլի այնպէս պիտի  
վանկուին: Օրինակ մարդա—բը—նակ, ձիթա—նը—կար, նորա—նը—  
շան, քարե—գը—րիչ կամ քարե—գրիչ (գըն ըրին կպցնելով):  
Այս տեսակ բառեր շատ չըկան, պատահած ժամանակ ես ցոյց  
կըտամ, թէ ինչ բառերից են բարդուել և ինչպէս պէտք է կար-  
դացուին: Բացի դրանցից՝ մի քանի բառեր էլ կան, որոնք մեր զի-  
տեցած կանոնով չեն կարդացվում, որովհետև մեր ասածի պէս  
չեն գրվում: Աչա այդ տեսակ բառեր ես կըգրեմ, իսկ դոք  
կարդացէք.

## (ասում ենք)

ըզբաղմունք, ըզբօսնել

ըզդաշ, ըզդաստ, ըզգեստ

ըզգուշութիւն, ըզմայիլ

ըշտապել, ըշտեմարան

ըսկեսուր, ըսկիզբն, ըսկսել

ըստոցդ, ըստուեր, ըստրուկ

ըստեղծող, ըսփանչելի

## (գրում ենք)

զբաղմունք, զբօսնել

զգալ, զգաստ, զգեստ

զգուշութիւն, զմայլի

շտապել, շտեմարան

սկեսուր, սկիզբն, սկսել

ստոցդ, ստուեր, ստրուկ

ստեղծող, սփանչելի

Աչա այս բառերը պէտք է առաջուց իմանաք. թէ ինչպէս են  
ասվում, որ գրածն էլ այնպէս կարդաք, և ոչ թէ զըգալ, շըտա-  
պել, սըտորագրել, սըտանալ, ինչպէս միւս բառերն են կարդացվում:  
Կամ, եթէ կարող էք, աշխատեցէք այնպէս կարդալ, որ ը չընկնի  
ոչ բաղաձայնից առաջ և ոչ յետոյ: Լսեցէք աշա ես ինչպէս եմ  
կարդում՝ Ստե՛—փան, և ոչ ըՄ—տե՛—փան: Մարդա—սպան, և  
ոչ մարդաս—պան կամ մարդա—ըսպան, մարդասը—պան: Պէտք է  
ասել և կարդալ սպա՛—սել, ստա՛—նալ, սպա՛ու—նալ\*): Աշխատեցէք  
դուք էլ առաջին երկու բաղաձայնը միասին կպցնել իրանցից յետոյ  
եղած ձայնաւորին և փոխանակ երկու վանկ շինելու մի վանկ շինե-  
ցէք, փոխանակ երեքի՝ երկու:

(\*) Այս տեսակ բառերի բարդութեանց մէջ պէտք է երկու բաղդաց այն  
եւս յաջորդ վանկուին տալ, ինչպէս բանա—ստեղծ, գիւրա—զգաց, բազմա—զբազ,  
բռնա—զբունել, սեւա—զգեստ, հոգե—զմայլ, հոգե—սպան, հիա—սքանց...:

ՎԵՑԵՐՈՐԴ ԴԱՍ

**ս, դ (յօդեր)**

Երեխէք, ես հիմա պէտք է ցոյց տամ ձեղ աւելի հեշտ և շատ հեշտ կարդալու բառեր. (Գրում է ս և դ յօդերով վերջացած բառեր, աւելի թ և ն տառերից յետոյ եղած) — Ես կըդրեմ, իսկ գուք կարդացէք, ոչ մի տեղ — ը ընձգէք . . . վարդ, կարդ, վարս, կարս, մօրդ, հօրս, գիրս, գիրդ, թունդ, բանդ, սանդ, գինդ, կինդ, կալդ, տալդ, ծալդ, ուլդ, զուլդ, ծիլդ, ձեռդ, կուռդ, գառդ, բառդ, հերդ, մէրդ, քուրդ, տէրդ, սէրդ, սուրդ, ջուրդ, բեռդ, կովդ, ցանդ, տունդ, շունդ, բունդ, նշանդ, կուանդ, դուանդ, գառանդ, եղանդ, ձիանդ, աղս, օղս, փողս, գողս, դողս, մաղս, եղս, ծառս, օրս, իրս, տէրս, սէրս, սուրս, ունքերս, աչքերս, ամառս, ձմեռս . . .

— Շատ լաւ կարդացէք. բոլորովին այնպէս, ինչպէս որ գըրուած են, բայց տեսէք, երեխէք, մենք թէպէտ այդպէս գրումենք, բայց այդպէս չենք կարդում. Օրինակ՝

(գրում ենք)

(ասում և կարդում ենք)

կարդ կարիր

վարս վարեցի

մօրս նման

կալդ կասեցիր

բեռդ ծանր է

բանդ դժուար է բանրդ դժուար է \*):

կարըդ կարիր

վարըս վարեցի

մօրըս նման

կալըդ կասեցիր

բեռըդ ծանր է

բանըդ դժուար է

Աչա այսպիսի տեղերումը բաղաձայնից յետոյ վերջին ս և դ դրերը կարդացվում են ինչպէս լ'ո, լ'որ, բոլորովին այնպէս, ինչպէս որ ըըն և նըն են կարդացվում վանկի վերջումը, բաղաձայնից յե-

(\*) Մանկական գրքերում գոնէ այսպիսի բառերի ս և դ յօդերը պէտք է ըստ միասին դնել.

առյ. ինչպէս՝ եղն, մեղը, գասն, փոքր . . . Բայց, երեխէք, ամենայն տեղ չըպէտք է ըստ և ըստ կարդալ. Օրինակ՝

գնան բանոդ

գնան բանըդ

Բանդ գնալն ուրիշէ, որ Աստուած հեռու տանի, իսկ բանի, դործի գնալն ուրիշ. մի տեղ ասում ենք բանդ կամ բանտ, միւս տեղ բանըդ. Մի ուրիշ օրինակ՝

Այս աղջիկը քո՞ւրդ է

Այս աղջիկը քո՞ւրըդ է

Տեսէք, մի տեղ աղջիկը քըդի զաւակ է գառնում, միւս տեղ քոյր, Եթէ ասենք զինդ, կընշանակէ ականջի օղ, իսկ եթէ ասենք զինըդ, կընշանակէ քո գինը. Եթէ ասենք սանդ, կընշանակէ հաւանդ, որի մէջ բան են ծեծում, իսկ եթէ ասենք սանըդ, կընշանակէ քո սանը, քո կնքածը, քո որդեգիրը կամ աշակերտը. Որ լաւ իմանաք, թէ որ տեղերում պէտք է կարդաք ը'ս, ը'դ, պէտք է գիտենաք, թէ որ տեղերում մն նրանք իմ և քո բառերի փոխանակ դրուած. Հապա, երեխէք, սըն որ աւելանում է բառի վրայ, այնտեղ նա նշանակումէ իմ, իսկ դն նշանակում է քո. Օրինակ, միւնցն նշանակութիւնն ունի ասել՝ իմ հայրը, և առանց «իմ» բառի, ասել՝ հայրը. այսպէս էլ փոխանակ ասելու՝ քո հայրը, կարող ենք ասել՝ հայրըդ. Փոխանակ ասելու՝ իմ քոյրը, իմ եղբայրը, իմ ձեռքը, իմ գլուխը, իմ գրիչը, իմ մատիտը . . . կարող ենք ասել՝ քոյրը, եղբայրը, ձեռքս, գլուխս, գրիչս, մատիտս. Աւրեմն սըն այսպիսի տեղերում գնում ենք «իմ» բառի փոխանակ։ Այսպէս էլ փոխանակ ասելու՝ քո սեղանը, քո գիրքը, քո տունը, քո տեղը . . . ասում ենք սեղանդ, գիրքդ, տունդ, տեղդ, այստեղ էլ դըն գնում ենք «քո» բառի փոխանակ։ Այսպիսի տեղերում աչա, ուր սըն նշանակում է «իմ» պէտք է կարդալ ը, իսկ դըն ուր որ նշանակում է քո, պէտք է կարդալ ը. բայց միւս տեղերումը, ուր դրանք իմ և քո չեն նշանակում, այնպէս կըկարդացուին, ինչպէս միւս բոլոր բառերը։

— Հիմա ինչպէս կըկարդաք.

գիրս տուր ինձ



**Կուռդ յետ քաշիր  
Ճեռու ցաւումէ**

(Կարգումեն՝ գիրըս, կուռըս, կուռդի, ճեռըս):

—Հիմա կարո՞ղ էք պատասխանել՝ եթէ հարցնեմ, թէ ինչո՞ւ համար պէտք է ասենք գիրըս և ոչ գիրս. գիրըդ, և ոչ գիրդ. Լը սեցէք, առաջ ես ինքս կըպատասխանեմ ձեր տեղակ, որ իմանաք, թէ ինչպէս պէտք է պատասխանել. —Այստեղ սըն պէտք է հնչենք ինչպէս ը, որովհետև սըն այստեղ մի ջոկ գիր է և աւելացել է բառի վերջումը «իմ» բառի փոխանակ. Այստեղ դըն պէտք է հնչենք ինչպէս ըդ, որովհետև դըն այստեղ մի ջոկ գիր է և աւելացել է բառի վերջումը «քո» բառի փոխանակ. Հիմա դուք ձեր խօսքերով պատասխանեցէք իմ ասածի միտքը, ինչքան և ինչպէս որ հասկացել էք: —Սարգիս, դու ի՞նչպէս կասես եթէ հարցնեմ, թէ ինչո՞ւ ես ասում գիրըս և ոչ գիրս:

—Որովհետև սըն այստեղ նշանակումէ իմ:

—Հատ լաւ է: Կարապետ, դու ի՞նչ կասես, ինչո՞ւ համար պէտք է կարգանք գիրըդ, և ոչ գիրդ:

—Որովհետև երբոր գըն նշանակում է քո, պէտք է կարգանք ըդ:

—Դու ել շատ լաւ ասացիր: (Այսպէս շատերին է հարցնում, առաջ լաւերին, յետոյ թոյլերին և օրինակներ է պահանջում \*):

—Բայց պէտք է զգուշանաք, երեխէք, որ ինչ բառերի վերջում դրանք աւելացած չեն իմ և քո բառերի փոխանակ չեն դրուած, չոկարգալ ըստ, ըդ, որ շատ սխալ կըլինի և տգեղ: Աչա, օրինակ՝ այդ տեսակ բառեր՝ վարդ (ծաղկեկ), մարդ (միջատ), բերդ, թունդ, գունդ, հանդ, տենդ (զերմ), կենդ (միշատեկ), կոնդ, պինդ, սանդ (չաւանդ), հիւանդ, հնազանդ, վարս (մազ), դուրս, հորս, չորս, հարս, անմարս, թուշնորս, ձինորս, ծախս (ծախք),

(\* Ս եւ դ յօդերը միայն ստացական յօդեր չեն. դրանք լինում են նաեւ անձնական (էական) եւ ցուցական յօդեր. այլեւ իբրեւ մասնաւորիչ. օրինակ՝ ինքս, ինքդ, ամենքս, ամեն մէկդ, ես Մարկոս, քեզ Գրիգորիզ: ստորագրեալաւ, նուռաստ, ծառալ, ձմեռաւ, ամառս, այսօրուան օրս, ժամանակս, երկիրս, աշխարհը, մարդս մահկանացու է...)

փախս (փախուսա, փախս տալ), ծառս (ձին ծառս կացաւ), թուխս (թխսական հաւ), առուրս (առուրք), Արաքս, Ալեքս, փուրքս (փքաց), ստամքս, դուրքս (մեծ իշխան), Կարս կամ Վարս (քաղաք) ... (Այսպիսի վարժութիւններով վերջացնումէ դասը):

**ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԻՒՆ**

(Առաջարկում է բոլոր անցածի համեմատ բառեր. — ինչպիսիք են հետևեալները — կարգացնում և գրել է տալիս վանկվանկ, հարցնումէ պատճառը, ստուգումէ, թէ ով է լաւ իմացել և ով չէ և լրացնումէ պակասութիւնները):

|                       |                            |
|-----------------------|----------------------------|
| միամիտ                | մի—ա—միտ                   |
| մատանի                | մա—տա—նի                   |
| եկեղեցի               | ե—կե—ղե—ցի                 |
| սեղան, աթոռ           | սե—ղան, ա—թոռ              |
| հիւանդ, նախանձ        | հի—ւանդ, նա—խանձ           |
| ախտակ, կարկուտ        | ախ—տակ, կար—կուտ           |
| վարձկան, վարժմունք    | վարձ—կան, վարժ—մունք       |
| Բագրատ, Տիգրան        | Բա—գրատ, Տի—գրան           |
| ոսկրացաւ, կարմրութիւն | ոս—կրա—ցաւ, կար—մրու—թիւն  |
| միիթար, մնացական      | մը—խի—թար, մը—նա—ցա—կան    |
| փրկիչ, գրից           | փր—կիչ, գըր—րից            |
| քրտնել, խնդրել        | քըրտ—նել, խնդր—րել         |
| մկրտել, կտրտել        | մը—կըրտ—տել, կը—տըրտ—տել   |
| իրինջալ, մրմիջալ      | իրը—իրն—ջալ, մըր—մըն—ջալ   |
| վկովալ, մնթմնթալ      | վընդ—վըն—դալ, մըռթ—մըռ—թալ |
| տալդ, գալդ            | տա—լըդ, գա—լըդ             |
| հօրս, մօրս            | հօ—րըս, մօ—րըս             |
| տունդ, տեղդ           | տու—նըդ, տե—ղըդ            |
| Ալէքսանդրապօլ         | Ա—լէ—քսան—դրա—պօլ          |







